Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
հունիսի 24 -ի N 352 - Ա
որոշման

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Մանկական խաղահրապարակների տեղադրում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3.	Բարեգործը	«Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպություն, 6850 Քենդի պողոտա, սենյակ 102, Ռեսեդա, Կալիֆորնիա 91355, Լոս Անջելես
4.	Ծրագրի կատարողը	«Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ.» ԲԿ հայաստանյան մասնաճյուղ, ք. Երևան, Վ. Համբարձումյան 2 շ, 37 բն, ՀՎՀՀ՝ 00130776
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Շիրակի մարզ, Բասեն համայնք, ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնք, Տավուշի մարզ, Այրում, Դեղձավան, Վարագավան, Աչաջուր համայնքներ, Արմավիրի մարզ, Սարդարապատ համայնք, Արցախի Հանրապետություն, Գողթանիկ և Մարտունի համայնքներ, սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	20,887,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Շիրակի մարզ, Բասեն համայնքի մանկապարտեզ, ՀՀ Սյունիքի մարզ, Տեղ համայնքի մանկապարտեզ, Տավուշի մարզ, Այրում, Վարագավան, Աչաջուր համայնքների մանկապարտեզ և Դեղձավանի միջն. դպրոց, Արմավիրի մարզ, Սարդարապատ համայնքի մանկապարտեզ, Արցախի Հանրապետություն, Գողթանիկի միջն. դպրոց և Մարտունի 2 զորամասի միջն. դպրոց

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	12.06.2020թ – 25.11.2020թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1 փուլ - 12.06.2020 թ. - 25.06.2020 թ. խաղային սարքերի պատվիրում և պատրաստում, 2 փուլ - 25.06.2020 թ. - 31.08.2020 թ. սարքերի տեղադրում, 3 փուլ - 01.09.2020 թ. - 30.09.2020 թ. խաղահրապարակի հանձնումը համայնքին 4 փուլ - 01. 10.2020 թ. - 25.11.2020 թ. ընդունման–հանձնման ակտերի ստորագրում
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Պայմանագրերը կնքված՝ 04. 05. 2020 թ. «Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ.» ԲԿ-ի և «Մագնոն» ԲԲԸ-ի միջև - խաղահրապարակների սարքավորումների արժեքը՝ 20.887.000 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն է նախատեսվում տեղական ինքնակառավարման մարմինների հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ